

նակելով՝ ժամ 5-ին հասաւ Բիչանակ, ուր սպասում էին Հին Նախիջևանի Փոխանորդն ու պատգամաւորութիւնը։ Նորին Սրբութիւնը բարեհաճեց զիշերել Բիչանակում։ Իսկ 8 ժամուօտան Նախիջևանից ուղարկած կառքերով յառաջ ընթացաւ Ճանապարհին գիւղացիներին խուռն բազմութիւնը ձայն եր տալիս. «Կեցցես, Հայրիկ ջան, արեւի՞դ մեռնեմ Հայրիկ»։ մի քանի անձինք երգում էին «Կոռնէկ ուստի՛ կուգաս», եւ ինչպէս ամէն տեղ, այստեղ եւս Նորին Սրբութիւնը իջաւ կառքից եւ խրատ խօսեց. ամէնքը ծունկի եկան. ապա «պահպանիչ» տակով կառք նստաւ. շատերը ձայնեցին. «Բարեաւ գնաս եւ շատ ապրիս» սիրելի՛ Հայրիկ»։

8 ժամին Նորին Վեհափառութիւնը մուտք գործեց Նախիջևան. ընդունելութիւնը փառահեղ էր. մեծ հրապարակի վերայ յաղթական կամար էր կանգնեցրած, ուր դիմաւորեց Վեհ. Հայրապետին քաղաքապետը՝ աղուհաց մատուցանելով եւ թարգման հանդիսանալով բոլոր քաղաքացիների ջեր զգացմանց. ապա մօտեցաւ զազին եւ ողջունեց Հայոց Հայրապետի գալուստը։ Ս. Հայրապետը թափորով եկեղեցի մտաւ. օրհնեց ամէնքին եւ մի ժամի չափ հանգստացաւ յաջորդարանում, ուր մի բաժակ սուրճ ընդունեց, եւ կառք նստելով բարեհաճեց փոխադրուել յատկապէս իւր համար պատրաստուած բնակարանը։ Երեկոյեան եկեղեցի իջաւ եւ քարոզասաց. քաղաքը զիշերը լուսաւորուած էր. Նորին Վեհափառութեան բնակարանի առջեւ երաժշտական խումբը նուագում էր եւ անթիւ բազմութիւնը զբօսում էր։ Երեկոյեան Վեհ. Հայրապետը բարեհաճեց ընդունել քաղաքապետին, իրաւասուններին եւ պատուաւոր անձանց։ 9 ին սոյնից Հայոց եւ Ռուսաց եկեղեցիները եւ Մաշմեղականների մկրիթը, եւ ապա ընդունեց ժողովրդեան մինչեւ կէս գիշեր. գիշերը դարձեալ քաղաքը լուսաւորուած էր եւ նուագածութիւն կար մինչեւ 12 ժամը։ 9-ի երեկոյեան ժամերգութեան ներկայ եղաւ եւ քարոզ խօսեց. ապա բարեհաճեց պատուել եկեղեցւոյ երեցփոխանին Նորա տանը թէյ վայելելով։ 6½ ժամին, երբ հաճեց իւր բնակարանը վերադառնալ, հրապարակի վերայ

հրախաղութիւն սկսուեցաւ եւ շարունակուեց մինչեւ 3 ժամ։ 10-ի ստաւօտան 8 ժամին Նորին Սրբութիւնը ելաւ Նախիջևանից, բազմութիւն ձիաւորների ու զեկցութեամբ կլրախի կայարանումը ճաշեց եւ երեկոյեան 6 ժամին իջաւ ու զիշերեց Նորաշէնում, զաւառապետի օգնականի մօտ, որ այս մասին նախօրօք Նորին ս. Օծութեան հաճութիւնն էր խնդրել։ 11 ին ուղեւորուեց դէպի Խոր վիրապի վանքը Ճանապարհին Դաւալու գիւղում հանգիստ առնելով։ (Նորին Վեհափառութիւնը Նախիջևանից մինչեւ Դաւալու կառքով էր Ճանապարհորդում, իսկ շքախմբի անդամները ձիով)։ Գիշերելով Խոր-վիրապում՝ Վեհ. Հայրապետը 12-ին գիտեց վանքը, ծանօթացաւ վանքի նիւթական փիճակին եւ ապա ուղեւորուեց դէպի Մայր Աթոռ։



ՄԱՅՐ ԱԹՈՒ.

Նորին Վեհափառութիւն Սրբ. Հայրապետը շարաթ սեպտ 12-ին երեկոյեան ժամերգութիւնից յետոյ ողջամբ Մայր Աթոռ հասաւ։ Նորին Սրբութեան վերադարձն այնչափ յանկարծական էր, որ Միաբանութիւնը հաղիւ կարողացաւ հապճեպով Վեհաբանի դուռը ժողովուել՝ զիմաւորելու համար, եւ ահա երեկեցաւ Սպիտակափառ Վեհ. Հովուապետը, որ այդ օր Խոր-Վիրապի վանքից ուղեւորուելով՝ Ճանապարհի մի մասը կառքով էր եկել, ապա ձիով, ստանց ուրիշ ուղեկիցներ ունենալու հետը, բացի իւր փոքրիկ շէքախմբից։ Նորին Վեհափառութիւնն ի մեծ ուրախութիւն բոլորի խիստ առոյգ էր ու զուարթ, եւ միայն հանգիւսների վերայ նստած փոշին վկայում էր, որ երկար Ճանապարհորդութիւն է արել՝ առանց յոգնածութեան այնպիսի նշաններ ցոյց տալու, որոնք բնական կլինէին իւր կէս տարիքն ունեցողների համար։ Միաբաններին իւր ողջոյնն ու օրհնութիւնը տալուց եւ տաճարի դուռը համբուրելուց յետոյ՝ Վեհափառ Հայրապետն անմիջապէս հանգստանալու ելաւ եւ յաջորդ օրը նոյն-

պէս միջոց չունեցաւ ընդունելութիւններ ա-
նելու. բայց ներկայ էր ս. պատարագին և երե-
կոյեան հանդիսին, ինչպէս նաև մեռելոց
երկուշաբթի օրը ս. Գայանէի վանքում մա-
տուցած ս. պատարագին և հոգեհանգստեան:

Սորին Վեհափառութեան ուղեկցելով
ս. Էջմիածին էին եկել Սոր—Բայազէի գոր-
ծակալ Արժ. Մատթէոս վարդապետն ու Տա-
թևի վանքի միաբան Արժ. Նիկողայոս վարդ-
Տէր Աւետիքեան: Հայր Մատթէոսը հաղար-
ժընի վանքին վերաբերեալ ինչ ինչ հաշիւներ
ներկայացնելուց յետոյ իւր պաշտօնատեղին
վերադարձաւ. իսկ Տ. Նիկողայոս վարդապետ
Վեհ. Հայրապետի հրամանով ուղեորուեցաւ
դէպի Տփլիս:

Օգոստոս 25-ին Մայր Աթոռ ժամանե-
ցին Զմիւռնիոյ առաջնորդ Բարձր. Ներսէս
վարդապետ Արարանեան և Կ. Պոլսոյ Պատրիար-
քական Փոխանորդ Բարձր. Դարբիէլ վարդ-
ժէվահիրձեան: Բարձր. հայրերը եկած են
պառաւանջաւոր վկայութիւններով, եպիսկոպոսա-
կան ձեռնադրութիւն ընդունելու համար, և
անհամբերութեամբ սպասում էին Վեհափառ
Հայրապետի զարտեան: Որովհետեւ ստիպո-
ղական հանգամանքներ հարկադրում էին նոցա
ըստ կարելոյն շուտ վերադառնալ. ուստի
Սորին Սրբութիւնը բարեհաճեց փութացնել
ձեռնադրութիւնը՝ նշանակելով կիւրակէ սեպ-
տեմբ. 20-ին:

Կ. Պոլսից եկել է նաև Մայր Աթոռ ուխտ
Բերայի ս. Երրորդութեան եկեղեցւոյ միաբան
Տ. Յակովբ քահանայ Տէլէձէկեան:

Օգոստոս 26-ին Արտաթումանից վերա-
դարձաւ Մայր Տաճարի աւագ լուսարար Գեորգ.
Մակար եպիսկոպոս և ստանձնեց իւր նախ-
կին պաշտօնները:

Ամբային ուղեորութիւնից վերադար-
ձան նաև Տ. Թովհանէս վարդ. Դպիր-Վար-
դանեան և Տ. Գարեգին վարդ. Եովսէփեան:

Սեպտ. 16-ին Մայր Աթոռ եկաւ Մշոյ
ս. Կարապետի վանքի փոխ—վանահայր Տ.
Թադէոս վարդ. Խաչատրեան:

Ի թիւս այլ օտար հիւրերի սեպտ. 8-ին
ս. Էջմիածին այցելեց Կոստերական տան բժիշկ
Ամերիկացի Հ. Ռոյլսսըն:

ձԵՄԱՐԱՆ ՄԱՐՅ ԱԹՈՒՈՑ.

Օգոստոս 30-ին վերադարձաւ արտասահ-
մանից Ծեմարանի Տեսուչ Մեծ. պ. Կ. Կոս-
տանեան: Բաւականաչափ ապաքինած և կազ-
դուրուած, և անմիջապէս գործի ձեռնարկեց:
Սեպտ. 1-ին, ինչպէս որոշուած էր, սկսան
նորեկների ընդունելութեան քննութիւնները
և տեղեցին մինչև 9-ը, երբ կանոնաւոր դա-
սատութեան սկիզբ դրուեցաւ: Ծեմարան
մանկ ցանկացողների մեծագոյն մասը դժբաղ-
դարաւ անպատրաստ էր Գ. կամ Գ. դասա-
րաններ մտնելու համար, բայց Վարչութիւնը
տեղի տալով խնդրատուների անդիմադրելի
աղերսանքին և վստահ լինելով, որ Վեհափառ
Հայրապետն ու Մայր Աթոռի միաբանութիւ-
նը հաշտ աչքով պէտք է նայեն, եթէ Ծեմա-
րանն իւր դռներն ըստ կարելոյն լայն բանայ
ուսումնաւարաւ մանուկների առաջ՝ ընդու-
նեց կրկնապատիկ թուով աւելի աշակերտնե-
ր, քան նախօրոք որոշուած էր: Այնուամենայնիւ
դուրսը մնացած խնդրատուներ դեռ չեն հե-
ռանում Ծեմարանի դռներից և նորեր շարու-
նակում են գալ. իսկ Վարչութիւնը ստի-
պուած է մերժել ամէնին, չունենալով այլևս
ոչ մի տեղ՝ ոչ այն դասարաններում ուր նո-
քա նստել կարող են, և ոչ ննջարանում:

Սոր ուսուցիչներ Ծեմարանի համար հը-
րաւիրուած են այս տարի նախկին Ծեմարա-
նաւարտ պ. Մ. Աբեղեան, որ երկու ամիս ա-
ռաջ յաջողութեամբ քննութիւն բռնեց և փի-
լիսոփայութեան դոկտորի աստիճան ստացաւ
Իննայի համալսարանում: պէտք է աւան-
դէ, Հայոց գրականութեան, լեզուի և պատ-
մութեան դասեր, պ. Բ. Խալաթեան՝ կանդի-
դատ Մոսկուայի համալսարանի լեզուաբանա-
կան բաժնի, որ ուսաց լեզու, պատմութիւն
և գրականութիւն պէտք է աւանդէ, և Ծնորհ.
Արշակ սարկաւազ, որ, Ներսիսեան դպրանոցն
աւարտելուց և մի քանի տարի ուսուցչու-

Թեամբ պարագելուց յետոյ՝ երեք տարի ուսել է Գիւրմանիայում և պէտք է վերականգնութեան պաշտօն վարէ՝ աւանդելով նաեւ մի քանի դասեր Գ. դասարանում:

Տ Ա Ճ Կ Ա Ն Ա Յ Ք .

Լիւթ անապատ.—Վանէն կը գրեն 15 Յուլիս Թուականով:

Վ. իմ անապատի վանքին վիճակը շատ անգոհացուցիչ պայմաններու մէջ կը գտնուէր: Վանքը հակառակ իր թեմին մէջ գտնուած 16 գիւղերու անուղղակի հասոյթին, բերրի ագարակներուն և Ռօտսթօ ու զանազան կողմեր ինչպէս նաեւ տեղւոյս մէջ ունեցած հասոյթարեր կալուածներուն, չի կրնար ինքզինքը ապրեցնել և թեւ կըլլայ ժողովրդին վրայ:

Վանքը հիմա ունի 9 վարդապետ՝ մեծ մասը անկարի 7 ծերուկ տիրացուներ և 6—7 զամաղան աշխատաւորներ, անոնց ալ մեծ մասը ծեր:

Վանքին մէջ կգտնուին 3000-ի մօտ տպուած և 300 ալ ձեռագիր գիրքեր՝ որոնք տարիներէ ի վեր խառն ի խառն գիւղուած կը մնան փականքի տակ, որովհետեւ վանականները բնաւ չեն ուզեր ունենալ կրնար օգտուիլ անոնցմէ:

Վ. յս անկերպարան վիճակիի դարման մը տանելու համար, ասկէ գրեթէ երկու ամիս առաջ Ս. Պատրիարքը Կոստան անապատի վանահայրական փոխանորդ Տ. Յովսէփ եպիսկոպոսին յանձնարարած էր գրաւորապէս որ Վ. իմ անապատի վանքին վանահայրական փոխանորդութիւնը ստանձնելով, քիչ մը բարեկարգէ վանքին վիճակը, Յովսէփ եպիսկոպոս եկաւ և Միաբանութեան մէջ եղած դժուարութիւնները զգործեցնելով բաւական լաւ տնօրինութիւններ ըրաւ վանքին վիճակը բարեկարգելու համար, այս մասին ընդարձակ ու շահեկան տեղեկագիր մըն ալ ուղղեց Ս. Պատրիարքին, Յուսալի է որ իր պաշտօնավարութիւնը օգուտ մը ըլլայ որչափ վանքին, նոյնչափ ալ տեղւոյն հայ հասարակութեան:

Վան.—Քաղքիս մէջ հիմա ունինք չորս որբանոցներ, երկուքը ազգային, երկուքը օտար:

Վարագայ վանքը առաջին անգամ այցելող մը գոհունակութիւն կը զգայ տեսնելով նոր կառուցուած վարժարանը իր յարակից շէնքերով, բաւական լաւ վիճակի մը մէջ, Եթէ երբէք կարնոր պահանքներ լրացուին և արհեստանոցին ալ պէտք եղած նիւթն ու դրամը հայթայթուի, ալ աւելի կանոնաւոր վիճակի մը մէջ պիտի գտնենք զայն:

անշուշտ, Արքեպիսկոպոս զո՛հ են իրենց վիճակին, Հագուստ, անկողին և սնունդ կ'ընելի եղածին չափ կանոնաւոր և մաքուր: Օտարներ թերեւ միգրէ քիչ մը ճօն ապրցնեն իրենց խնամքին յանձնուած որբերը, սակայն մեր տոհմային և կրօնական կրթութիւնը միշտ գերակշիռ պիտի մնայ և ամէն տեսակետով օգտաւետ: Այս միկնոյն բաները նաեւ կրնամ ըսել Վարմուրայ որբանոցին համար:

— Վանայ կուսակալ Թաճիր փաշա, օգոստ. 2-ին, հետն ունենալով քաղաքային և դատական պաշտօնէից ստուար խումբ մը, բոլոր օրն անցուց այցելելով Վարագայ և Վարմուրայ վանքերն ու որբանոցները: Հոգարարձութիւնը, պաշտօնեայք և աշակերտք մեծարանցք ընդունեցին զանոնք: Վարագայ մօտ հովասուն վայր մը նախաճաշ տրուեցաւ ի պատիւ կուսակալի, ապա միջօրէին մօտ՝ ճօն սեղան մը վանքին մէջ, մինչ կերգէին աշակերտք, Կուսակալն յետոյ Վարմուրայ վանքը գնաց, ուր նոյնպիսի ընդունելութիւնք եղան, Հատ զո՛հ մեկնեցաւ, իրիկուան ուշ ժամանակ քաղաք դառնալով:

— Վանայ Գոմինիկեան Բագերաններն 80 ոսկի առաջարկեցին Հատախի հայերուն զանոնք կրօնափոխ ընելու համար, Բայց Հատախցիք հպարտէն մերժեցին:

Սանասարեան վարժարան.—Պարուցի ազգայինները, Պ. Կ. Եզեանցի յորդորանաց վրայ, իրենց ծախքով յանձն առած էին 8 որբ տներ խնամել և դաստիարակել տալ Սանասարեան վարժարանին մէջ, անցեալ 57—98 ուսումն տարեշրջանէն սկսեալ Պ. Եզեանց վերջերս զեկուցած է Սանասարեան Տեսչութեան թէ 17 սանի պաշտպան զանել յաջողած է, և հրահանգ տուած է միանգամայն ասոնցմէ 10-ին ալլեայլ դատաւներու վրայ բաշխումը կատարել ու որբեր ուղղել 98—99 տարեշրջանին համար, իսկ 7-ին (մնացեալ) բաշխումը մօտաւոր ապագայի վերապահել, Վարժարանին Հոգարարձութիւնը, Տեսչութեան հետ համախորհուրդ, հետեւեալ 9 տեղերու վրայ կատարած է բաշխումն և զեկուցած Առաջնորդարաններուն, Բիւնկեան (Վկնայ գիւղերէն)՝ 1 սան, Մարաշ՝ 2, Մալաթիա՝ 1, Խարբերդ՝ 1, Հ. Կարահիսար (Կ. Պոլիս Խաճկալութեան զինուած)՝ 1, Մարզուան 1, Եւդոկիա՝ 1, Մշկածագ՝ 1, Սերաստիա 1, ընդամենը 10 սան:

— Պայպըլ Հաուզէն 250 օրինակ գրաքար Եստուածաշունչ նուիրուած է, կարօտ եկեղեցիները և դպրոցները զրկուելու համար:

— Կրօն Ժողովը իր 4 օգոստ. նիստին մէջ Վանայ և Գուրպէլէնի մէջ պատահած կրօնափոխութիւններու մասին, խորհրդակցութիւններ կատարելով, այս մասին տեղեկութիւններ տուաւ Ս. Նախագահէն իր կողմէ կատարուած ձեռնարկութիւններուն և գործողութիւններուն նկատ

մամբ, որոնցմէ երեւցաւ թէ այդ շարժումները արդէն դադրած են: Նիկոմիդիոյ Առաջնորդ Տ. Ստեփան եպիսկ. արդէն Գուրապէլէն երթալով տեղացիներուն խնդիրները կարգադրած և կրօնափոխութիւններուն առաջըը առած է: Շարժման պարագլուխ Տ. Ամբակում Վ. Պոլիս եկած է: Բայց Պատրիարքարան չէ ներկայացած: Ժողովը հարկ տեսաւ որ Վանայ Առաջ. Տեղապահէն տեղեկութիւններ ստացուն Վանայ և Աղթամարայ կողմերը պատահած կրօնափոխութիւններուն նկատմամբ, որոնք նիւթական պէտքերէ առաջ եկած են:

— Արլսնէր թէ Գուրապէլէնի կրօնափոխութեան շարժման պարագլուխ Ամբակում Արդ. և Ազգ. Պատրիարքարանի կողմէ իրեն նկատմամբ տեղի ունենալէ կարգադրութեանէ խոյս տալու համար, Հոգովեականներու Պատրիարքարանը ապաստանած և իր դիմումը ընդունուած է Տ. Աղարեան պատրիարքին կողմէ:

— Թուհիանէի կայս. նպաստամտոյց Յանձնաժողովը այս անգամ ևս 1000 օսմ. ոսկիի գումար մը ղրկած է Ազգ. Պատրիարքարան, գաւառացի կարօտեւոց բաշխուելու համար:

— Մկրտար Ե. Խաչ եկեղեցիին քարոզիչ Տ. Գրիգորիս Արքեպիսկ. Ալեքսիան՝ Արօն. Ժողովին որոշման համաձայն, 9 օգոստ. նոյն եկեղեցիին մէջ Արմաշու միաբան Տ. Մատթէոս արեղային վարդապետական գաւազանի մասնաւոր իշխանութիւն տուաւ: Գաւազանի տրւելու թեան արարողութեանէն վերջը Տ. Մատթէոս վարդապետ իր առաջին քարոզը խօսեցաւ: Ընտրան ունենալով «նախ առնել և ապա ուսուցանել» և բացատրեց վարդապետական կոչման նշանակութիւնը:

— Պատրիարքական Փոխանորդ Տ. Գարրիէլ Ծ. Վ. Ճէփահիրճեան և Իզմիրի Առաջնորդ Տ. Ներսէս Ծ. Վ. Ասլանեան 10 օգոստ. մեկնեցան Վ. Պոլսէ գէպի Ե. Էջմիածին, եպիսկոպոսանալու համար:

— Ս. Պատրիարք Հօր կարգադրութեան համաձայն, փոխանորդարանի գործերը պիտի վարէ Խաս գիւղի քարոզիչ Տ. Գնէլ Վ. Գալէմբարեան:

— Միքայէլ էֆ. Յակոբեան 25,000 ոսկիի չափ հանգանակած էր «Ազգին տան» վերաշինութեան համար (անոր մէջ ըլլալով նաև իր և իր եղբոր նուէրը), Իր հօգաբարձութեան օրով, իր 22,000 ոսկի ծախսեց շինութեան, ու կամար 2,500 ոսկիի չափ, զոր հիմակ ուղղակի իր պատասխանատուութեան տակ կգործածէ: Կառուցանել տալու Հիւանդանոցի շէնքին այն թէն որ պիտի ըլլայ հիւրանոց, գեղարան և տեսարան, հիւրանոցը պարունակելով բժիշկներուն համար ննջասենեակ, խորհրդակցութեան սենեակ, ինչպէս և այցելուներուն համար ընդունելութեան սրահ: Յակոբեան էֆ. այս կերպով սպասելէ ետք վերաշինութեան զրա-

մը, զեռ բաց կմնան (1) Մատուռն և (2) Շէնքին այն զլխաւոր թէն որով քառակուսին պիտի ամրոցանար: Արանց Հիւանդարանի մը շինութեամբ, մինչդեռ հիմա արանց հիւանդանարանն և յիմարանոցը խճողուած են շէնքին առաջուց շինուած թէնքուն մէջ, որոց ճարտարապետութեան ոճին դէմ հանապաղ բողբոքելու են բժիշկները: Արդ, կլսենք թէ Միքայէլ էֆ. Յակոբեան իր ծանօթ բարեպաշտութեան պատիւ բերող առաքինութեամբ, յանձն առեր է բոլորովին իր անձնական ծախքով կառուցանել նոր Ս. Փրկչի մատուռն, և արդէն կսուի թէ հիմա կատարուելու վրայ եղած շինութիւնն ևս ամրոցանալու համար պէտք ունի իր անձնականէն մաս մը բան աւելցնելու վերաշինութեան զրամին մնացորդին վրայ: Բայց անկէ անդին, նորակառոյց մատուռն ալ օրհնել և օծել տալէ ետքը, Միքայէլ էֆ. Յակոբեան իր արդիւնաւոր գերը վերջապէս վերջացած կնկատէ Ազգ. Հիւանդանոցին նկատմամբ, և կուզէ որ քիչ մ'ալ ուրիշներ՝ պակաս խօսին և շատ գործեն, նամանաւանդ շատ տան զրամ:

— Պէլէնի (Հալէպի նահանգ) Հայերուն մէջ վերջերս կրօնափոխութեան շարժումներ երեւն ելած էին, Բայց Վիճակին առաջն. Տեղապահին ջանք շնորհիւ, այս շարժման պատճառները մէջտեղէ վերցուելուն, կրօնափոխը դարձեր են ի ծոց Հայ. եկեղեցւոյ, Արեւափոխութեան պատճառ եղած է: Կսուի, տեղւոյն Տ. Նշան ան, և կուտասէր և ազէտ քահանան, և շնորհքով քահանայի մը անհրաժեշտ պէտքը մատնանիչ կրլայ:

— Ժողովրդեան իր մայրնի եկեղեցւոյ ծոցէն անջատման զլխաւոր պատճառ մ'է եղեր նաև Անտիոքի Թեմօրէից հոգեւոր հովիւ Տ. Թադէոս Վ. անուն ոմն, որմէ շատ դժգոհ է իր ժողովուրդ:

— Անտիոքի թեմ Պիթիաս գիւղի մօտիկը Ս. Յովհանն Մեկեբերեան անուն ուխտատեղի մը կայ որ նշանաւոր է իր գեղեցիկ և զմայլելի զիրքով ու ջրով, և իր շրջակայ գետինով Վրդ. սեփականութիւն մ'է: Բողոքականք երկար ժամանակէ ի վեր կաշխատին միջոց մը գտնել այդ գետինն իւրացնելու, բայց մերայինք փոյթեանդն կգտնուին իրենց իրաւունքը պաշտպանելու: Նամակագիր մը տխուր պատկեր մը կգծէ Անտիոքի վիճակին հայ ժողովրդեան կացութեան վրայ: Արօնքի կապին բացակայութեան երեւեն, միշտ տրամադիր են կրօնափոխութեան բան մը որուն մղում կուտան բողոքական և կաթօլիկ կրօնաժառաղք, ձրի կրթութիւն տալով, մինչ հայ կղերն իր պարտականութեան անգիտակից և անհոգ է բացարձակապէս:

— Վեհ. Սուլթանը բարեհաճած է ներում շնորհել Բաղէշի մէջ բանտարկուած կամ ձերբակալուած հարիւրի չափ Ախլաթցի ազգայնոց:

— Արօնական Ժողովը գումարեցաւ օգոստ.

35-ին Պատրիարքարանի մէջ նախագահութեամբ Ս. Պատրիարք Զօր և ատենապետութեամբ Տ. Գրիգորիս Արքեպիսկ. Յովհաննիսեանի և զբաղեցաւ հետեւեալ խնդիրներով.—Մարգուանի ս. Աստուածածին վանքին Հոգաբարձութեան զլիարար անդամ ընտրուած է վանքին փոխ—վանահայր Տ. Գեորգ արեղայ Իրրիանոսեան և միւս եկեղեցական անդամն է Տ. Եղիա Վ. Գերձակեան։ Նոյն Հոգաբարձութեան երկու աշխարհական անդամոց ընտրութիւնն ալ յանձնուեցաւ Սերաստիոյ Առաջնորդ Տ. Պետրոս Արքեպիսկոպոսի որպէս զի ժողովրդային ընտրութիւն կատարելով տեղեկագրէ Պատրիարքարան։—Վանայ Մեծոփայ Վանքին՝ Տ. Գրիգոր Վ. Նորովանցի և Աղբակու ս. Բարգուղիմէոս վանքին՝ Տ. Ներսէս Վ. թէն կոչուած են ի պաշտօն վանահայրութեան րայց ըստ վերջին տեղեկագրոց։ Դեռ իրենց պաշտօնին սկսած ըլլալով որոշուեցաւ վերստին յորդոր կարգաւ անցնելու իրենց պաշտօնին գլուխն և իրենց հոգեւոր գործունէութեամբ օգտակար ըլլալու աղբին։ Անկէ ետքը պիտի բարձրանան յաստիճան մեծի վարդապետութեան իրենց բազմանոց համաձայն իրենց հոգեւան վաստակոց ի վարձատրութիւն։—Աղթամարայ միաբան Մխիթար Վ. որ անվաւեր պսակ կատարելուն համար ժողովոյ կողմէ կանոնական ապաշխարութեան ենթարկուած էր այս անգամ Տ. Արսէն Վ. Մարգարեանի միջոցաւ զղջում յայտնած և ներում խնդրած է։ Ժողովը բաւական համարեց ապաշխարանքն և ներում շնորհեց։—Բալուի առաջն. Տեղապահ Տ. Եղեթիկ Վ. իր Վիճակին եկեղեցեաց համար մատենաներ ուզած ըլլալով ժողովըն որոշեց զրկել այդ գրքերը։ Ժողովն ասոնցմէ զատ զբաղեցաւ ամուսնական և այլ խնդիրներով։

— Ամեն. Տ. Պատրիարք Հայրը 15 օգ. շաբաթ իրիկուն Մայր եկեղեցի իջնելով ժամերգութեան ներկայ գտնուեցաւ և Մարգարեան Տ. Տիրայր արեղային վարդապետական գաւազանի մատնաւոր իշխանութիւն տուաւ։

— Սերաստիոյ առաջնորդ Տ. Պետրոս արքեպիսկոպոս ընկերակցութեամբ իր անձնական քարտուղար Տիգրան էֆ. Բիրիշեանի 7 օգոստ. Մէսա ժրբի շոգենաւով կիսկնի մայրաքաղաքէս Սամսոնի ճամբով իր պաշտօնատեղին վերադառնալու։ Ն. Գերապատուութիւն Ամասիա պիտի մնայ։ Արօն, Ժողովին կողմէ իրեն յանձնարարուած Տ. Տաճատ քահանային տեղւոյն առաջն. Տեղապահին և ուրիշ կարգ մը խնդիրներու վերաբնութիւնը կատարելու և արգիւնքը տեղեկագրելու Արօն, Ժողովին, Տ. Պետրոս արքեպիսկ. Նոյնպէս մէկ ամսուան չափ պիտի մնայ Ալգոկիայ վիճակային գործերը կարգադրելու համար։

— Վեհ. Սուլթանը բարեհաճած է Այս. Բարձր. Իրադէով մը հրամայել որ Ազգ. Հիւան-

դանոցին ու Որբանոցին տրուած պետական հացի ու մսի պարէնին վրայ յաւելում մը ըլլայ։

2մշկածագէն կգրեն օգոստ. 10-ին.—Տեղապահը վերադարձաւ Խարբերգէ, ուր որբերուն խնդրոյն համար տեսակցեր է Մխիթնարաց հետ որք նպատակ ունին ներկայացուցիչներ զրկել հօս, որպէս զի թէ քաղաքին մէջ և թէ գիւղերը գրեւծուած որբերն հաւաքելով տանին ի Խարբերգէ իրենց սեպհական Ամբիկեան Որբանոցը գնելու համար։ Տ. Թաթուլ Հայր եկածին պէս՝ շրջաբերականներ զրկեց բոլոր շրջակայ գիւղերը, ծանուցանելով որ ասանց Վեգրոնի գիտութեան՝ այդպիսի խնդիրներու համար ոչ բանակցին և ոչ իսկ յանձնեն իրենց որբերն յուսադրելով թէ շնորհի Ս. Պատրիարք Զօր բարեացակամութեան՝ մեք մեր զաւակները տոհմային հարազատ կրթութեամբ կըրնանք խնամել Ազգ. Որբանոցի մը մէջ, զոր բանալու վաստահութիւնն ալ ունինք։

— Տեղապահը կաշխատի երկար տարիներէ ի վեր անխնամ մնացած թեմական վիճակին բարւոքման, Վարժարանին մնացեալ մասն ևս շինել տալու ձեռնարկեց։ Անձամբ կհսկէ շինութեանց, շատ անգամ նոյն իսկ կաշխատակցի վարպետին կամ գործաւորներուն։

— Վիւմիշ—Մատեն այցելած միջոցին տեղւոյն Հայ ժողովուրդը հոգեւոր խնամքէ բոլորովին զուրկ գտած և առաքարկած է որ քահանայացում ընտրեն։ Այդ խղճեր իրենց մէջ այս նուիրական պաշտօնին տրամագրելի մէկը չունենալով կաղաչեն որպէս զի ինք գտնէ ըստ կարի յարմարոյն ընտրելի մը։ Տեղւոյս ընկններէն յանձնեա Տ. Գասպարեանի այս խնդիրն ալ վերջացաւ։

Վիւմիշ—Մատեն և Գրգրի—պաշխ.— Վիւմիշ—Մատեն ունէր երբեմն 4—5000 տուն բնակիչ։ Հիմակ հազիւ 200 տուն, որոցմէ 60 ն հայ, 8 ն յոյն, մնացեալ մեծամասնութիւնը թուրք է։ Լեռներու մէջ ընդարձակ աւերակներով շրջապատուած վայր է սա, օդն հեղձօցիչ։ 10 վայրկեան հեռաւորութենէ կանցնի Մուրատ գետն, ունի գեղեցիկ պարտեզներ, այգիներ, բանջարանոցներ, սիրուն եկեղեցի մը, երկրագործական ու տնտեսական տաղանայի բերմամբ հետզհետէ մերկացած իր թանկագին հարստութենէն, ոսկեղէն, արծաթեղէն, և զգեստեղէն զարդերէն, Խուլէզեղցի քահանայ մը երբեմն այցելարար կմատակարարէ ժողովուրդին հոգեւոր պէտքերը։ Անին երաժիշտ դասատու մը, Վիւմիշ—Մատենցին ամառը կ գաղթէ Մուշ-Լիլի և Պիրվան գիւղերն, Մուշ-Լիլի՝ 2մշկածագի հարաւարեմտեան կողմը, Տաւրոսի լեռնաշղթայի մէկ կողմին վրայ հիմնուած Գըզըլ—Պաշերու գիւղ մէ, Ամեն Գըզըլ—Պաշ գիւղ ունի իր ժողովրդապետը՝ Պապա կոչուած, Իրենց մեծագոյն կրօնապետը

կիողուի Սէր-Չէշմէ, որ կնստի Խարբերդի Սիւն գիւղը, Սէր-Չէշմէն ունի իրեն ստորագաս պաշտօնեաներ, Միւրշիւտ. Միւրշիւտին ստորագաս է Տէտէն, որ ունի 12 անգամէ բազկացեալ ժողով մը, Պապան՝ Տէտէներու ստորագաս է, Ամէն տարի Տէտէներ այցելութեան կեննեն իրենց թնմերուն, Ի Մուշ-Էլլի Ս. Էղիա լերան ստորոտն, օմախներ կան, ուր Տէտէն ամէն Ս. Եղիայի տօնին օրեր կհաւաքէ ժողովուրդն, հոգևոր խրատներ կխօսի, երգեր կերգուին, զօհեր կը մատուցանեն, զոհուած գառներու ոսկորներն, աղիքները մաքուր տեղ մը կթաղեն, ապա կեպին, Տէտէն հրապարակաւ կխոստովանեցնէ հաւատացեալներն և հաղորդութեան կը պատրաստէ. ո՞վ որ յանցաւոր է պարտաւոր է երթալ իր թշնամիէն ներողութիւն խնդրել. մէջերնին արիւնհեղուծիւն իսկ արած ըլլայ՝ կներն, առանց մէկի մը բողոքելու. ապա կը համարեն Տէտէին ոտքը, ծուկն և ձեռքը (միշտ 3 թիւը նուիրական), Ժողովուրդը կվկայէ այս ինչ անձին անմեղութիւնն ու արժանաւորութիւնն, ետքը Տէտէն այդ խոստովանողաց կրածնէ զօհի միս և հաց, ու կվերջանայ իրենց արարողութիւն, Կը հաւատան Ալիին, որ, ըստ իրենց, յանձին Քրիստոսի՝ քրիստոնէից երևցեր է. կհաւատան Քրիստոսի Աստուածութեան և 12 առաքելոց, Սն իսի Իմամար անունով, Ունին միայն մէկ օրինակ գիրք, Պոյրուզ կոչուած, որ կպարունակէ իրենց կրօնական հաւատալիքները, բայց անտեսանելի՝ ո՞նէ է մահականացուի աշքէն, Մուշ-Էլլի միայն 8 տուն Մատենցի հիւրընկալած է, 40 տան չափ Մատենցի Հայիր Պիրվան կը զբոսնուն, Այս գիւղն ալ ամբողջովին Գըզըլ—Պաշե-րէ բնակուած է, Հայերն հիւր են, Ունի ընդարձակ ծառաստաններ, յորդ և զով ջուր, քիչ մը խոնաւ օդ:

Մասնաւոր աղբիւրից տեղեկանում ենք, ինչպէս և աղգ. մի քանի թերթերի մէջ հաղորդուած է արդէն, որ մօտ օրերս Կ. Պոլսում մի նոր օրաթերթ պէտք է սկսի հրատարակուել «Սուրհանդակ» անունով. Այդպիսով մեր տաճկահայ ազգայինք երրորդ օրաթերթը կունենան մայրաքաղաքի մէջ «Բիւզանդիոն»-ից և «Արեւելք»-ից յետոյ, վերջինս կօտորածների միջոցին կայսեր. հրամանաւ դադարեցրած լինելով վերստին հրատարակուել սկսաւ անցեալ Օգոստոս 1-ին, Մասիսի փոխարէն, որ վերջին տասնեակ տարիների միջոցին մի քանի անգամ իւր պատկերը փոխել է և ժամանակաւորապէս օրաթերթի էր վերածուել:

Նոր թերթի խմբագիրը պէտք է լինի յայտնի հրապարակախօս Տիգրան ճիգէլէկեան՝ արդէն իսկ խմբագիր «Ճերիտէի» Շարդիյէ՝ հայատաւ և թրքարարաւ թերթի, որ յաճախ հայերէն յօդուածներ ևս ունենում է՝ անուանի գրող-

ների գրչից կլաճ (որպիսի մէկն օր. Արարատի յուլիս 5-ի մէջ յիշեցինք), և Մայր Աթոռի պատին առաջին պաշտպանողներից մէկն էր, երբ մի քանի անգամ առաջ «Բիւզանդիոն»-ի մէջ այն անհեթեթ զրպարտութիւնը լոյս տեսաւ:

ՊԱՐՍԿԱՀԱՅԲ.

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ. *

ՍԱԼՄԱՍ.

Թաւրիցից 80 վերստ դէպ արեւմուտք Ուրմիոյ լճի մօտ գտնուում է Սալմաստը՝ հին Պարսկահայոց «Զարեանդ»-ը, որ Ատրպատականի թեմի առաջին կարևոր վիճակն է. հիւսիսից սահմանակից է Խոյի գաւառին, արեւմուտքից Տաշկաստանի Աղբակին, հարաւից քրդաբնակ Սօմային, Սալմաստ մի ձուածե ընդարձակ դաշտափայր է, 40 վերստ երկայնութեամբ և 15—20 վերստ լայնութեամբ. ոռոգւում է Զօլա գետով, որ արեւմուտքից արեւելք հոսելով դաշտը երկու մասի է բաժանում, Հողը խիստ բարեբեր է, առատութեամբ մշակում են հացաբոյսեր. օգը բուական ցուրտ լինելով նպաստաւոր չէ բամբակի և բրինձի մշակութեան, Աշխատասեր գիւղացիները արուեստական ընդարձակ անտառներ են տնկել, որոնցից առատ ատաղձ և վառելափայտ է ստացուում, պտղատու ծառերն և այգիները անհաշիւ են, շրջակայ լեռներից նայած այս դաշտը մի խիստ ընդարձակ այգիի տպաւորութիւն է թողնում մարդու վրայ, Սալմաստի կենտրոնն է Տիլիման քաղաքը, զուտ թրքաբնակ, 1000 տուն. հայերն այստեղ միայն վաճառանոցներ ունին, առևտուրը ծաղկած է, Սալմաստի նախկին քաղաքն է հին Սաղամաստը, այժմու հին—քաղաք կամ Քէօհնէյ—շիհէր կոչուածը, այստեղ կան հին շինութեանց մնացորդներ, արաբական տիրապետութիւնից մնացած մի մեծ մինարէթ. բնակիչներն են հայ, թուրք և հրեայ. հայերն ունին երկու հողաշէն եկեղեցի, մի ուսումնարան, Սալմաստի հայերը բնակւում են 28 գիւղերում, որոնց 6 ը միայն զուտ հայաբնակ, միւսները խառն թրքաց և ասորաց հետ, Այս ցրուած վիճակը տեղացի հայոց մտաւորական զարգացման ահագին արգելք է եղել, զատ զատ գիւղերում բնակուած լինելով կարելի չէ եղած միևնոյն ուղղութեամբ ուժեղ միջոցներով կրթական մի գործ սկսել, մի ամբողջութիւն կազմել:

* Տե՛ս «Արարատ» 1898 թ. համար Ը. եր. 356:

ներկայ գրութեամբ ամեն զիւղ իւր սեփական բազմին է թողնուած:

Գովելի նախանձախնդրութեամբ քանի տարիներէ ի վեր Սալմաստի հայերը սկսել էին կրթական գործին կարեւորութիւն տալ: արտասահմանից եկած մի քանի կրթական առաքեալներ մեծ զոհողութեամբ աշխատել են որոնց մէջ ամենից կարեւոր լսածին ունեցել է հանգուցեալ նախկին թեմական—տեսուչ Ս. Աւետիսեանը: քայքայ վերջին երկու տարւան հալածանքները որ օսմանեան կառավարութեան գործամբ եղան ամեն գործ խանգարեցին: Պէտք է այժմ նորից սկսել ուժեղ միջոցներով: Թաւրիզի Առաջնորդի ազդեցութեամբ և Սալմաստի մի գործունեայ եռանդոտ փոխանորդի նախաձեռնութեամբ կարելի է ժողովրդի հանգիստը վերագարձնել: կրթական գործին մղում տալ վաղուց մտադրուած կենտրոնական վարժարանի հիմը դնել: Յուսալի է որ Ազգիս Աւհափառ Հայրապետի մի հրաւերով Պոլսաստանում գտնուող հարուստ Սալմաստցիներ օժանդակութեան կը հասնեն: Սալմաստի բնիկ վաճառական և հաստրակ ժողովուրդ շատ սիրով կ'օգնեն և այս խաւար անկիւնում մի լուսոյ տաճար կը բացուի: Մի քանի տարւան արտաքին օգնութիւնը տեղացիներին կը վարժեցնէ զոհողութեան որից յետոյ գործը ինքնին առանց դրսի նպաստի ևս կարող է շարունակուել: քիչ չեն Սալմաստի վաճառականներ որ իրենց զաւակներին մեծ ծախքերով Թիֆլիզում կրթութիւն են տալիս:

Սալմաստի հայաբնակ գիւղերից այժմ միայն Հաֆիմլան, Փայաճուկ և Ղալասար կարող են երկդասեան ուսումնարան պահել: վիճակագրական ցուցակից կերևան այդ հաշիւները: Քահանաները շատ քիչ բացառութեամբ տգէտ են: ոմանք համարձակ կախարգութիւն են անում: չկայ ոչ մի քահանայ որ կարողանայ ուսուցչութիւն անել: գիւղերի մեծ մասը փոքր լինելով՝ չեն կարող ուսուցչի ուսման վճարել իսկ կրթութեւն քահանան կարող էր և ուսուցչութիւն անել:

Գլխաւոր հայաբնակ գիւղերում հոյակապ եկեղեցիներ կան ուսումնարանի շէնքեր բաւական յարմար: մեծ մասամբ շինուած Ատրպատականի արքիմեաւոր Առաջնորդ Մուշեղեան հանգուցեալ Գրիգորիս եպիսկոպոսի նախաձեռնութեամբ: Հաֆիմլանում կայ նաև թատերական սրահ, գրադարան—ընթերցարան որ 1000-ի չափ գրքեր ունի: Փայաճուկ, Ղալասար և Մահլամ գիւղերում ևս գրադարանի փորձեր եղան և այդ նպատակով ընկերութիւններ հաստատուեցան: սակայն տեղացի երիտասարդները շարունակ պնդիտուելու ստիպուած լինելով՝ չեն կարողացել պէտք եղածին պէս նուիրուել գործին և ուշադրութիւն դարձնել: Գրասիրաց ընկերութիւններից զատ Ղալասարում կայ նաև կանանց բարեգործական ընկերութիւն: որ զգա-

լի յառաջագիւտութիւն չէ արել: օղնում է միայն օրիորդաց դպրոցին: երբեմն Դէրիքի վերաշինութեան համար տուել է իր դրամի մեծ մասը: Քանի որ այս վանքի անունը տունք՝ տեղն է յիշելու որ այժմ բոլորովին աւերուած է: քիւրդերը միայն մի պատը թողել են: եթէ այս անկնամ գրութեան մէջ մնայ՝ կալուածները քիւրդերի սեփականութիւն կը լինին: որոնք երկու տարիէ ի վեր ամենայն համարձակութեամբ օգտուում են նոցանից: Աւհակագրական հաշուից երևում է որ 1569 տուն ունեցող Սալմաստը 15 ուսուցիչ և 432 աշակերտ միայն ունի: միջոցաւ 1200-ից աւելի ուսումնարանի հասակ ունեցող տղայ կայ: բացի աղջիկները: որոնց կրթութիւնը բոլորովին բարձի թողի է եղել: որովհետև վարժուհի չկայ: Միայն Ղալասար գիւղում կայ օրիորդաց մի դասեան վարժարան: Հաֆիմլան, Փայաճուկ և Մահլամ գիւղերում երբեմն լինում է երբեմն ոչ: Սալմաստի բնակչաց վրայ պէտք է աւելացնել և 500 տուն գաղթականներ: որոնք վերագաւառու միտք չունին և պէտք չկայ արդէն: ուրեմն իսկապէս ուշադրութեան արժանի է այսպիսի բազմահայ մի տեղ: ուր բացուելիք կենտրոնական վարժարանը չըջակայ գաւառներից ևս բազմաթիւ աշակերտներ կարող է ընդունել: քանի որ այստեղ ապրուստը համեմատաբար աւելի աժան է ամեն տեղից: Այժմ գոյութիւն ունեցող վարժարանների վիճակն էլ ապահովուած չէ: Եկամտից հաստատուն աղբիւրներ չկան: եկեղեցիները դրամազուլիս կամ հասութեալեր կալուածներ չունին: բոլոր ձախքը ծանրանում է միայն աշակերտաց վրայ: Սալմաստի ամենից կարեւոր ուսումնարանը Հաֆիմլանին է: տարեկան ծախսը յաջող տարիներում 700 ռուբլին չի անցնիլ: Ազգային վարժարաններից զատ Ամերիկացի միսիոնարներն ունին մի ուսումնարան Հաֆիմլանում և կաթողիկ Միթթաբեանները Սալմաստում: պէտք է ասած որ այս զբաղողները մերիկներից շատ աւելի անխնամ և խեղճ գրութեան մէջ են:

Արեւմտիոթութեան շարժում չկա: Սալմաստում: նախկին Առաջնորդներից կաթողիկների և բողոքականների դէմ եղած հալածանքները որ տեղացիներին ահապին վնաս պատճառեցին: վերջացել են: Ամերիկացի միսիոնարները հեռացել և մի քանի շամաշներ են միայն թողել: Լազարիստ կրօնաւորների առաջակութեամբ Աննեաթիկի Միթթաբեան հայերը մի առաքելութիւն են ուղարկել Սալմաստ: որի կենտրոնը Սալմաստում է: դժբախտաբար Աննեաթիկի անուան պատուաբեր գրութեան մէջ չեն: Անցեալ տարի գերմանական մի ընկերութիւն Ղալասարում բացել է որբանոց: երկու սեռի մանուկների համար: այժմ 43 որբ ունին: բաւական լաւ են խնամում: քայքայ կրթութեան հոգ չեն տանում: (միսիոնարաց մօտ ծառայող խոհարար-

րին ուսուցիչ նշանակելը աժան լինելուն արդեօք թէ ուրիշ նպատակի համար էր), Համեմատած Ատորպատականի միւս գաւառներին՝ Սալմաստցիք բաւական կրօնասէր են: Տիւրասէր վերին ստիճանի, գաղթականներն և հալածականներ ամենից աւելի այստեղ խնամուած են: մինչև այսօր Թաւրիզից և շրջակայքից գաղթականները փախչում են Սալմաստ գնալու համար:

Անցեալ 97 թուին Սալմաստում և սահմանադիւրի վրայ կատարուած մի կարգ անխոհեմ շարժումները Օսմ. և Պարսից պետութեանց մէջ բարդութիւններ յառաջ բերին. պարսիկ կառավարութիւնը ստիպուեցաւ խիստ միջոցների գիմել և այդ պատճառաւ ժողովուրդը չափազանց վնասուեցաւ: խուզարկութիւններ տեղի ունեցան, բայց Ազգ. իշխանութեան ազդու միջամտութեամբ հայերի համար անվնաս անցաւ և կառավարութիւնը զգալով որ խարուել է՝ իր վստահութիւնը վերահաստատեց: Առկասի հայ թերթների մէջ այդ ժառին երեցած թղթակցութիւնները զարմանք միայն պատճառեցին տեղացիներին, քանի որ իրողութիւնները խեղաթիւրուած և զրպարտութիւններով համեմուած էին: Պարսիկ կառավարութիւնը միշտ բարեացակամ է եղած զէպի հայերը. փոթորիկներ թէև երբեմն վրդովել են խաղաղութիւնը, բայց կրթութեամբ և առաջնորդը ազդուապէս պաշտպան է կանգնել, կարողացել է կառավարութեան տրամադրութիւնը փոխել և զրպարտիչներին խայտառակել:

Ատրպատականի Առաջնորդը լոկ մի հոգեւոր գլուխ չէ իր հօտին, նա կառավարութեան հետ անդադար բանակցութեան մէջ է լինում ժողովրդի իրաւունքները պաշտպանելու, դատեր տեսնելու, գրեթէ մի հիւպատոսի ազդեցութիւն և պատիւ ունի. հայալեւանի գաւառներին սարփորաստ նշանակելու, վնասակար պաշտօնեաներ փոխել տալու մէջ Առաջնորդի ձայնը ահագին կշիռ ունի:

Սալմաստի գիւղերի մեծ մասը աղաների սեպահանութիւնն է, Հաֆթիւն և Ղալասար միայն գիւղացիներից գնուած:

Աղաները ստանում են երկրագործութեան արդիւնքի 8-ից 1-ը, բայց ընդհանրապէս 3-ից 1-ը, միւս տուրքերը համեմատած Ռ. թիոյ գիւղօրէից թեթեւ են: Այս գաւառը տնտեսապէս բաւական ապահովուած կարելի է համարել, Սալմաստցիներից հարուստ փաճառականներ կան Ղալասար և Փայաճուկ գիւղերում: ընդհանուրի ապրուստի միջոցը պանդխտութիւնն է, դժբախտաբար վերջերս սկսել են ընտանիքներն ևս փոխադրել, մանաւանդ Սարի գիւղացիները մեծաւ մասամբ Ռոստով են փոխադրուած, կանայք և երեխաներ միայն և 10-15 ծերունի կարելի է տեսնել այս գիւղում: Միւս գիւղերում միջին հաշուով տան զլուխ մի պանդխտ կայ:


1896-ի վիճակագրութեան համեմատ 1488 պանդխտ կար, այնուհետև շատացել է:

Պանդխտաւայրը միայն Ռուսաստանն է, ուր զբաղուում են առևտրով և մշակութեամբ: Սալմաստի հայերը գրեթէ արուեստ չգիտեն, կտուներկելը (շիլէճի) հայերի միակ արուեստն էր որով շատ տուններ զբաղուում էին: շիլէն արտահանում էր Ալէքսանդրապոլի, Ղարսի, Երևանի նահանգները և մեծ սպառում ունէր Պարսկաստանում: բայց ուսական շիլերը սրա դէմն առանձնապէս Սալմաստում միայն մի տուն այժմ այդ գործով է զբաղուում, Հաֆթիւնում կան դարբիններ, որ լաւ արհեստաւորներ են համարուում ծածկաստանում ևս: Բացուելիք Կենտրոնական վարժարանը, եթէ ունենայ նաև արհեստից բաժին՝ պանդխտութիւնը կէս առ կէս կարող է պակսեցնել:

Հայ կանայք ծոյլ և առանին գործերի անվարժ են, նոյն խի գուլթայ հիւսել չգիտեն: Բարոյականութիւնը կարելի է միջակ համարել. պանդխտութեան արգիւնքն է այս ի հարկէ. տղամարդկանց շատերը Ռուսաստանից փոխադր են վերադառնում և տեղացիների առողջութիւնը խանգարում:

Ամուսնութիւնը վաղածամ է կատարուում, 12—14 տարեկան ազգիկն արդէն հասած է, 16—18 տարեկանը պատաւած. երիտասարդն ամուսնանում է 12—24 տարեկան, Մերձասոր ամուսնութիւններ յաճախ են պատահում, Առաջնորդական տուրքերը բաւական յօժարութեամբ վճարում են, Թաւրիզի Առաջին Սալմաստից ստանում է 240 ո. պտղի, նոյնչափ և պսակահարկ, հոգեբաժին ելն: Փոխանորդարանը Հաֆթիւնումն է, 4 տարի առաջ յանկարծ ստորերկրեայ ջրերը բարձրանալով շատ տներ քանդեցին, ընդ որս և փոխանորդարանը, եթէ շարունակուի այդպէս՝ բիշ ժամանակից այդ գիւղը անբնակելի պիտի դառնայ, նոյն երեղիթը նկատուում է նաև միւս գիւղերում:

(Կր շարունակուի)



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

ՕՏԱՐԱԶԳԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՅ.

Մանկավարժութեան գրականութիւնը այնպէս է ստուարացել, որ այդ ճիւղի ամէն